Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
հոկտեմբերի 3-ի N 1553-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 2023 թվականի
մարտի 9-ի N 290-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՏԳ ԱԱ 2404 11 000 9 ԾԱԾԿԱԳՐԻՆ ԴԱՍՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ ՄԻՆՉԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՉՕՏԱՐՎԱԾ՝ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Եվրասիական տնտեսական խորհրդի կողմից 2021 թվականի մարտի 5-ին հաստատված Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման համակարգի հիմնական տեխնոլոգիական կազմակերպչական մոդելի (այսուհետ՝ հիմնական մոդել) համաձայն դրոշմավորման ենթակա ապրանքների մինչև հիմնական մոդելի համաձայն դրոշմավորման ներդրման ժամկետը չօտարված՝ դրոշմավորման ենթակա ապրանքային մնացորդների դրոշմավորման հետ կապված հարաբերությունները:

2. Հիմնական մոդելի համաձայն դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ ներմուծող հանդիսացող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև սույն որոշման 1.1-ին կետով սահմանված համապատասխան ժամկետները ներառյալ արտադրված կամ ներմուծված՝ հիմնական մոդելի համաձայն չդրոշմավորված՝ 2404 11 000 9 ծածկագրին դասվող ծխախոտային արտադրանքի իրացումը թույլատրվում է մինչև 2025 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

3. Անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ հիմնական մոդելի համաձայն դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող անձանց կողմից մինչև 2025 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ ձեռք բերված՝ հիմնական մոդելի համաձայն չդրոշմավորված՝ ԱԱ 2404 11 000 9 ծածկագրին դասվող ծխախոտային արտադրանքի՝ առանց դրոշմավորման իրացումը թույլատրվում է մինչև 2025 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ:

4. Սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձանց նույնականացման միջոցը տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված ազգային օպերատորը:

5. Սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձանց կողմից հիմնական մոդելի համաձայն դրոշմավորման ենթակա՝ չդրոշմավորված ապրանքների մնացորդների դրոշմավորումն իրականացվում է սույն որոշման N 1 հավելվածով հաստատված կանոններին համապատասխան:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

03.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ